ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(10 սեպտեմբերի, հինգշաբթի, 1998 թ.)

Սիրելի հոգևոր եղբայրներ, սիրելի տեսուչ Հայր Սուրբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, դասախոսական կազմի հարգարժան անդամներ և շատ սիրելի, քանկագին սաներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի: Այսօր իմ սիրտը ուրախությամբ հորդում է, երբ տեսնում եմ իմ աչքերի առաջ երիտասարդների այսպիսի մի ընտիր խումբ, որոնք իրենց կամավոր հոժարությամբ եկել են այստեղ և հետքննության ընտրվել են, արժանի են համարվել՝ լինելու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանող: Սա առաջին հերթին արժանիք է, շահված արժանիք ձեր կողմից՝ ձեր կատարած աշխատանքների, ձեր անցկացրած քննությունների արդյունք որպես: Բայց այստեղ արժանիք բառը, առաջին իսկ թարգմանությամբ, նշանակում է պարտք, պարտավորություն, պատասխանատվություն:

Աստված ոչ մեկին շնորհ չի տվել՝ շնորհ տալու համար: Աստված մարդուն շնորհ տվել է՝ այդ շնորհը արժևորելու համար, մի օր իր Արարչին պատասխան տալու համար: Եվ այսօր, դուք, արժանիք ունենալով, ձեզ պարտավորության տակ եք դնում: Հատկապես նոր ընտրված սաներին եմ ուղղում իմ խոսքը, որ վեց տարիներ շարունակ ապրելու եք այս հարկի ներքո, և այդ վեց տարիների ընթացքում կերպարանափոխվելու եք, պայծառակերպվելու եք, որ երբ վեց տարին ավարտվի, հարց տաք դուք ձեզ. ես ե՞մ այն, ինչ որ վեց տարի առաջ էի, երբ եկա: Եթե եմ այն, ինչ որ էի վեց տարի առաջ, ապա ափսոս վեց տարիները, ափսոս ձեր ուսուցիչների ջանքերը, ափսոս նաև ձեր տարիքը, ձեր անցկացրած վեց տարիները: Բայց եթե պատասխանը լինի՝ ոչ, ես չեմ այն, ինչ-որ էի, այլ մի նոր անձ եմ, իմ վրա դրվել է այս ճեմարանի կնիքը, եկեղեցու կնիքը, դրոշմը, ես չեմ այսինչ այսինչյանը, ես եմ սպասավորը Աստուծո, եկեղեցվո, ազգիս և Հայրենիքիս՝ դուք և մենք շահած կլինենք:

Լսարանական ուսման այս վեց տարիները, որ ունեք Գևորգյան ճեմարանում, կյանքի հոգեմտավոր մի այնպիսի ընթացք է՝ գործի, ընթերցումի, գրավոր և այլ տեսակ աշխատանքների, որոնց միջից մարդ ինքն իրեն ճանաչում է մի նոր կերպարի ներքև: Ես էի անհատ, հիմա եմ ոչ անհատ, այլ՝ ուղարկյալ, առաքյալ, պաշտոնյա Աստուծո: Կհուսամ այս կերպարանափոխությունը ձեր մեջ պիտի կատարվի այս վեց տարիների ընթացքում, և այսօր, երբ կատարում ենք ճեմարանի նոր ուսումնական տարեշրջանի բացումը, այսպիսի բազմության դիմաց եմ տեսնում ես ինձ, և երբ լսեցի տեսուչ Հայր Սուրբի խոսքը, անդրադարձա այն օրերին, որ ես էլ, ինձ հետ եղող սրբազաններն էլ, չէինք այն, ինչ որ ենք այսօր, երբ մուտք գործեցինք մեր դպրեվանքի դռնից ներս:

Կիլիկյան Աթոռի դպրեվանքի մուտքի ճակատին գրվել է՝ «Խորհէ և մտիր»: Ես մի հոդված եմ գրել ժամանակին, թե երբ տասներեք կամ տասնչորս

տարեկան էի, մտա այդ հաստատության դռնից ներս և չէի կարողանում այն ատեն մտածել, խորհել: Իմ տարիքը, իմ ուսումը չէր ների ինձ, որ նման խոր մտածմունքներ ունենայի, փոքր տղա էի: Սակայն այդ վեց տարիների ընթացքին խորհեցա և մուտքս արժևորվեց խորհելուս գնովը: Այդ խորհելու գինը եղավ ընդունումը Աստուծո ծառայության, այս սուրբ սքեմը, որ մարդը կարժևորի, եթե մարդն ինքը արժանիք ունի: Ատոր համար ողջունում եմ ձեզ: Այս տարի գրում ենք 1998-99, հաջորդ տարի, Աստված մեզ բոլորիս կյանք տա, այստեղ երբ հավաքվենք, պիտի կարդանք և գրենք 1999-2000:

Թևակոխելու ենք 2000-րդ տարին, քրիստոնյա ամբողջ աշխարհը տոնելու է քրիստոնեության 2000-ամյակը: Մեր Եկեղեցին, սակայն, նաև տոնելու է քրիստոնեությունը որպես պետական կրոնք ընդունման, ինչպես ես սիրում եմ ասել, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1700-ամյակը: Դո՛ւք, երիտասարդներ, դո՛ւք պիտի պատմության մեջ գրեք ձեր անունը՝ որպես 1700-ամյակի սերունդ: Դուք շրջափոխության, անցման շրջանի մեջ եք, որ մեկ հազարամյակը պիտի կապեք մյուս հազարամյակին: Անշուշտ հազարամյակի տարուն մեջ ոչինչ չկա, որ տարբեր լինի, նույն արևն է, նույն հողն է, նույն երկինքն է, նույն շարժումն է: Ի՞նչ տարբերություն 2000-րդ տարվան և 1999-րդ տարվան միջև, փոփոխությունը ներսն է, մեր գիտակցության մեջ է, որ մենք կտրել ենք 2000 տարիներ և ապրել ենք, ստեղծագործականորեն ենք ապրել, հիմա ի՞նչ պիտի անենք, որ այդ ապրելը ավելի ճոխացնենք, առավել ևս իմաստավորենք Աստծուն հաճելի և մեր պատմությանը արժանի արարքներով, ինչպես Մովսես Խորենացին ասում է. «Գործք արութեան»:

Ի՞նչ արիության գործեր պիտի կատարինք: Երբ այդ հատվածը ուզեցի օտար լեզվով թարգմանել, մտածեցի՝ ինչպես թարգմանեմ՝ քաջությա՞ն գործեր, ո՛չ, առաքինության գործեր: «Արի» բառը լատիներենի մեջ չի նշանակեր միայն արժեք, չի նշանակեր միայն քաջություն, այլ կնշանակի առաքինություն՝ այն գործերը, որոնք գործողի գնալու հետ կանցնեն գործչին: Մովսես Խորենացին չկա, բայց իր «Գործք արության» պատմության գիրքը մինչև այսօր դեռ կկարդացվի: Մեսրոպ Մաշտոցը չկա, բայց Մեսրոպ Մաշտոցը ապրում է այն հազարավոր երեխաների մեջ, որոնք դպրոց են գնում այս տարի կամ հաջորդող տարիներին: Մեսրոպը նրանց ուսուցիչն է իր Այբ, Բեն, Գիմ-ով: Ես այսօր ցանկանում եմ ձեզի մեկ-երկու մտածումներ փոխանցել, որպես տեսակ մը ձեր առաջին դասը 1998-99 տարեշրջանի:

Երկուշաբթի մեր այս ճեմարանի շրջանավարտներից ութին ես ուղղարկում եմ մեր Հայոց բանակին: Առաջին անգամն է մեր պատմության մեջ, գոնե վերջին շրջանին, որ Հայ Եկեղեցին ներկա է լինելու հայ զինվորների կողքին, նրանց՝ մեր Հայրենիքը պաշտպանող բանակի զինվորներին, հիշեցնելու համար Աստծու աչքին ներկայությունն իրենց վրա, Հայ Եկեղեցու հոգու ներգործությունը իրենց մեջ, հոգևոր և բարոյական արժեքների գիտակցումը: Եվ մենք պետք ունենք այսօր հոգևորականների ոչ թե միայն բանակին, այլ նաև հիվանդանոցներին ծառայելու, մեր բանտերում գտնվող անձերին,

որբանոցներին ծառայելու, ծերանոցներին ծառայելու և ոչ թե միայն ծուխերին և ժողովրդական համայնքներին: Եկեղեցու գործը օրեցօր ծավալվում է. պատիվ նրան, ով կարող է ասել. ահավասիկ ես այստեղ եմ, ուղղարկիր ինձ: Հիշում եք Աստվածաշնչի այդ սքանչելի տողը. երբ Աստված իր ժողովրդին հովիվ է ուզում ուղարկել, և ոչ ոք չի համարձակվում: Մի մարդ առաջ է գալիս և ասում. «Ահաւասիկ ես Տէր, առաքեա զիս» (Եսայի Զ 8), սակայն նաև ավելացնում է, թե իր այս շրթունքները պիղծ են, ինքը չի կարող Տիրոջ սուրբ խոսքը ժողովրդին տանել: Տեսիլքում Աստված ունելիով կայծն է առնում և կայծով նրա շրթունքների վրայից անցնում է ու ասում. «սրբվեցին քո շրթունքները» (ԵՍԱՅԻ Զ 6). Գնա:

«Ահավասիկ ես, առաքեա զիս», այս հոգին է, որ պիտի արժեցնի մի անձի: Ո՛չ ձեր գիտությունը, ո՛չ ձեր հմտությունը, ո՛չ ձեր դրամը, ո՛չ դիրքը, ո՛չ անունը, ո՛չ պաշտոնը որևէ առավելություն չեն բերի: Ձեզ ասեմ. ո՞վ է այսօր հիշում, Բրքիշո, Սուրմակ, Շմուել Կաթողիկոսներին, նրանք Կաթողիկոսներ էին և Պարսից իշխանությունը նրանց էր ճանաչում, երբ Սահակ Պարթև Հայրապետը աքսորվել էր: Ո՞վ է հիշում, ի՞նչ են արել: Տիտղոսը մարդը չի փրկե, մարդն է, որ տիտղոսը կարժեցնի: Քիչ առաջ Հայր Հայկազունը իր խոսքի մեջ ասում էր, որ այստեղ Գրիգոր Լուսավորիչն է ուսուցանել, այստեղ մեծ գործ է կատարել Ղազար Փարպեցին՝ թարգմանչաց սերնդի վերջին պայծառ աստղերից մեկը: Պատմիչը ասում է, որ գտնվեցին տգետ, անուս, անտեսիլ, անհորիզոն, «օրը օրվան մեջ ապրող և սպանող» (Փարպեցու խոսքն է) մարդիկ: Ո՞վ է հիշում աստրական ուսման ծանոթ կամ հաղորդ այս մարդկանց, ո՞վ է հիշում, բայց Փարպեցին չի մոռացվի: Հիմա դուք ինչպե՞ս եք ձեր կնիքը դնելու այս եկեղեցու կյանքին մեջ: Դրա համար ես ավելի ընդհանուր խոսքերի մեջ չեմ ուզում այսօրվան իմ խոսքը տարածել, ուզում եմ մասնակի լինել, հատուկ ձեզ համար խոսել:

Ամեն մի ժամ, որ դատարկ եք անցկացնում, Աստծու առաջ մեղք է: Այն ժամանակը, որ մեր ստեղծումը չէ, այլ Աստծու տուրքը, այդ ժամանակը երբ դատարկ կանցկացնեք, դատարկաբանությամբ, բամբասանքով, ըսի-ըսավով, քսու դատարկաբանությամբ և ծախու ստախոսությամբ ու գրախոսությամբ, մեղք է: Իմիջիայլոց անցյալները անդրադարձա, որ մեր մեղքերի ցանկին մեջ ամենեն շատ մեղքերը լեզվին կվերաբերվեն, որ իսկապես Հակոբոս առաքյալին նման, երբ կխոսի, փոքրիկ մեկ բան է լեզուն, ասում է, բայց կարող է աղետների դուռ բացել: Ինչպես լուցկիի փոքրիկ բոցը կարող է անտառում հրդեհ առաջացնել, այնպես էլ լեզուն: Նավու ղեկը, որ փոքրիկ կտոր մըն է, ամբողջ նավին ուղղությունը կփոխե:

Դուք ձեր ժամանակը պիտի լցնել գիտնաք ինքներդ, և ոչ թե ձեր ժամանակը ուրիշները խլեն ձեզանից: Երբեմն ես նկատում եմ, որ մարդ են գալիս դատարկ զբաղումներով, սպառվում են իրենք իրենց: Ոչ թե ժամանակն են սպառում, այլ իրենք են սպառվում ժամանակի մեջ: Ամենից մեծ մեղքը, որ ես մարդու համար կարող եմ երևակայել, դա դատարկությունն է, ծուլությունն է, անշարժությունը, անտարբերությունը: Գիրքը, ընթերցումը, մի նոր բան սովորելը պիտի այրի ձեզ: Երբ երեկո գա, պիտի հարցնեք, թե այսօր ես ի՞նչ

սովորեցի, այսօր նախորդ օրվանից ի՞նչ ունեմ ավելի: Այս հարցը երբ դուք ձեզ չտաք և հանգիստ քնով չքնեք, այդ օրը դատարկ օր է:

Երկրորդ ասելիքս այն է, որ մենք այսօր գտնվում ենք մի նոր կացության առքև: Նոր ենք արթնացել յոթանասուն տարիների այն թմբիրից, որ մեզ պարտադրվել էր սովետական կարգերի կողմից: Այլևս մի խոսեք, թե յոթանասուն տարի այսպես են արել կամ այնպես են արել, կարծեք թե մեր այսօրվան անգործությունը հոգեբանորեն ուզում ենք բացատրել յոթանասուն տարիները պատճառաբանելով: Ո՛չ, յոթանասուն տարին անցել է, հիմա արդեն մենք տասը տարի է գրեթե, որ ունենք ազատության պայմանները, յոթ տարի է, ահավասիկ, ունենք մեր անկախությունը: Ի՞նչ ենք անելու հիմա, որ ստեղծված այդ դատարկությունը լցնենք, ո՛չ թե բացատրենք, ոչ թե ինքնարդարացնենք մեր անգործությունը: Մի գեղեցիկ գաղափար տարածվել է և՝ մեր հոգևորականության մեջ, և՝ մեր ժողովրդի մեջ, որ ինքնին գեղեցիկ է, բայց ոչ բավարար, և կարող է սխալ ուղով տանել մեզ և ճիշտ չհասկացվել: Այս առավոտ միայն այս կետը իմ ուշադրությանը եկավ և ուզեցի նրա մասին ձեզ խոսել:

Եթե մեկը ուզենա կրոնական աշխատանք տանել ժողովրդի մեջ, կրոնական ապրումը խորացնել, տարածել, ամրացնել, զարգացնել, ասում է՝ Ս. Գիրք ենք բաժանում: Սուրբ Գրոց ընկերակցության մեկ ներկայացուցիչը սրանից մեկ-երկու տարիներ առաջ ինձ ասաց 103000 Նոր Կտակարան ենք տարածում: Ուրիշներ, թերևս նրա չափ, կամ ավելի կարող են տարածել: Սիրելի աշակերտներ, Ս. Գիրք տարածելը կրոնք տարածելու հետ նույնը չէ: Եվ ինչ տարօրինակ զուգադիպություն, այս առավոտ մի օտար բարեկամ եկավ ինձ մոտ և այս ամսաթերթը բերեց ինձ, Անգլիայում ամենեն ճանաչված «Աստվածաբանություն» անունով թերթն է, որի մեջ մի հոդված կա, որ իմ ծանոթ աստվածաբաններից մեկն է գրել: Նա ասում է. «Ս. Գրքի անբավականություն, անբավարարություն»: Ս. Գիրքը մոտ 1600 էջերից բաղկացած գիրք է, դարերի ընթացքում գրված, խմբագրված, վերախմբագրված գիրք է: Այս Ս. Գիրքը ժողովրդի ձեռքը տալով մենք ի՞նչ կարող ենք տալ ժողովրդին, եթե չբացատրենք այդ Ս. Գիրքը, չհասցնենք ժողովրդին, այն ինչ ասում է Ս. Գիրքը, որովհետև այդ գիրքը հասկանալը դյուրին գործ չի: Այդ գիրքը չի գրվել որպես դասագիրք: Այդ գիրքը չկար դեռ, հատկապես՝ Նոր Կտակարանը, երբ Եկեղեցին կար, քրիստոնեական հավատքը կար, Եկեղեցու կյանքը կար, աղոթքները կային, ծեսերը կային, բայց գիրքը չկար: Հիսուս երեսուներեք տարեկան էր, որ խաչվեց, թաղվեց, ապա հարություն առավ, իսկ Ավետարանի առաջին գիրքը երեսուն տարի ետքը խմբագրված էր, այն էլ՝ միայն Մարկոսի Ավետարանը: Ի՞նչ էր անում Եկեղեցին առանց գրքի, չէ՞ր ապրում, ապրում էր: Գիրքը Եկեղեցուց, կրոնական կյանքից ծնվեց և ոչ թե Եկեղեցին՝ Ս. Գրքից: Հիմա քարոզիչներ են գալիս դրսից, խոսում են, բացում են այն հատվածը, որ իրենց հաշվին կկանգնե, չարաշահում են Ս. Գիրքը: Իրենց ուզածին պես են բացատրում: Ես այսօր ինչու հիշեցի այս մեկը, որովհետև այս թերթը, ինձի հասավ այս առավոտ, և այս հարցը ինձի բավական տագնապեցնում էր անցնող երկու-երեք տարիներին: Մենք մարդու պետք ունենք, որ Ս Գիրքը կենդանացնե ժողովրդի մեջ, այլապես մի վաճառական, մի հարուստ մարդ,

միլիոնատեր կարող է մեկ միլիոն Ս. Գիրք տարածել, դա քրիստոնեություն տարածել չի նշանակում: Քրիստոնեությունը, մեր եկեղեցին մարդկանց կյանքի հետ կապ ունի և ոչ թե գիտության, հմտության, ուսման հետ:

Ես Ս. Գիրքը սովորել եմ ոչ թե Ս. Գրքից, այլ իմ մեծ մորից, որ կարդալ չէր իմանում: Ոչ մեկ գիրք չէր կարողանում կարդալ, դպրոց չէր գնացել, բայց այնպես կենդանի ձևով Հիսուսի կյանքն էր պատմում, որ մեզ՝ փոքրիկներիս, խանդավառում էր, ձեռքերիցս բռնում-տանում էր եկեղեցի: Կյանքը գրից չէ կախված, գիրն է, որ կյանքից կծնվի: «Գիրն սպանանէ», - կրսե Աստվածաշունչը, այլ «Հոգին կեցուցանէ»: (Հովհ. Զ 64): Հոգին է, որ կապրեցնի, այդ հոգին մարդով կարտահայտվի: Մենք ենք, մեր եկեղեցու սպասավորներն ենք Աստծո խոսքը, ճշմարտությունը ժողովրդին տանելու և այդ ժողովրդի կյանքի մեջ ապրումի, գործի վերածելու: Եթե երբեք մենք չպիտի անենք, դո՛ւք ասեք ինձ, ո՞վ պիտի անի: Ես՝ ոչ, դու՝ ոչ, մյուսը՝ ոչ, ապա՝ ո՞վ: «Սիավասիկ ես, առաքեա զիս»՝ այս է մարդուն արժեքը: Մարդու արժեքը երբեք իր ունեցածին մեջ չէ, այլ՝ իր տվածին մեջ: Լավ իմացեք բանաստեղծին պես՝ Վահան Թեքեյանի, որ ասում է. «Ի՞նչ մնաց, կյանքեն ինձի ի՞նչ մնաց, ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ, այդ միայն»:

Գրագետ լինի, տաղանդավոր գրող լինի, բայց չգրի, ի՞նչ արժեք ունի: Մի արվեստագետ սքանչելի ձայն ունենա, բայց չերգի, ի՞նչ արժե: Ինչ որ կմնա, ոչ թե դու ես քո ունեցածով, այլ դու ես քո տվածով, և այդ է, որ մեր աշակերտներին մանկավարժական ուսման մղիչ ուժը պետք է լինի, ուղեցույց ճանապարհ պետք է լինի, թե այսօր ես Գևորգյան Հոգևոր Ճեմարանում ի՞նչ եմ ուսանելու, ի՞նչ եմ իմ անձի հետ խառնելու, յուրացնելու: Այս բառը հայերենում շատ գեղեցիկ բառերից մեկն է՝ քոնը անել՝ յուրացնել, սեփականացնել, չթողնել գիրքին մեջ, այլ քեզնից բխելու պես խոսել՝ յուրացնելուց հետո, քո անձի հետ խառնելուց հետո: Հետևաբար, ես այսօր, իմ խոսքը փակելուց առաջ, շնորհավորում եմ մեր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությանը, տեսուչ Հայ Սուրբի օգնականներին, ուսուցչական կազմի բոլոր անդամներին, թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական, և բոլոր պաշտոնյաներին, ովքեր ծառայում են այս հաստատության մեջ: Այստեղ հավաքարարն անգամ ինձ համար առանձին նշանակություն ունի: Շենքը մաքուր, կոկիկ պահելը ավելի կարևոր է, քան իր սեփական սենյակը, որովհետև սա իմը չէ, ազգինն է, և դրա համար աշակերտները պետք է սովորեն մաքրության, կոկիկ պահպանության, կարգուկանոնի դասը այս շենքի շրջապատից:

Գնահատանքի իմ խոսքն եմ ուղղում նաև բոլոր այն անձերին Հայաստանում կամ արտասահմանում, որոնք իրենց նյութական և բարոյական աջակցությամբ զորավիգ են կանգնում մեզ: Ես ուզում եմ մեր սիրելի ուսուցիչները, աշակերտները գիտնան, որ մարդիկ կան, որ բժիշկ են կամ գործարար մարդիկ են և իրենց սերն են արտահայտում՝ այս հաստատության նյութական միջոցները ապահովելու տեսանկյունից: Բայց պատճառ չունեն, բացի սիրուց: Ինչո՞ւ համար վիրաբուժական գործողություն անող մարդը կամ զովացուցիչ մեքենա վաճառող մարդը Գևորգյան Հոգևոր Ճեմարանին պիտի դրամ տա, ինչո՞ւ: Ազգին, Եկեղեցուն, Աստծուն սիրելու համար է: Եվ մենք չենք կարող

նրան հուսախաբ անել, ամոթ է: Այն աշակերտները, որոնք իրենց ժամանակը վատնում են, Աստծու կողմից իրենց տրված կարողությունները փչացնում են և այդ մարդկանց զոհողությունները իզուր տեղն են անցկացնում, ամոթ:

Մի անգամ, երբ մեկ ուրիշից մի բաժակ ջուր է ստանում և խմում, ասում է՝ շնորհակալ եմ: Մենք, որ ազգի, եկեղեցու այսքան միջոցներով ուսում ենք առնում, հասակ ենք առնում, մենք պետք է արժեցնենք այդ մեր կյանքով, մեր նվիրումով, որպեսզի կարենանք հասնել այն տեսակ ծառայությունների, որ մեր ժողովրդի կյանքը պարապ չմնա, դատարկ չմնա, մակերեսային արժեքներով չլցվի: Հետաբար այս տարվան համար ցանկանում եմ լավագույնը, որպեսզի ասեմ՝ վերջին տարեշրջանն է երկրորդ հազարամյակի: Մյուս տարեշրջանին պիտի ավարտենք 2000 տարին գրելով և հետևաբար եկեք այս 1700-ամյակի տեսիլքով, վառ կենդանությամբ, նախանձախնդիր ոգիով, այլևս խոսքին, ճառին, հռետորության վերջ տանք և գործենք: Մարդ ունի ուղեղ և ունի ձեռք, միտքը և ձեռքը երբ միանան, հրաշքներ կարող են գործել, այսինքն՝ իմացությունը, ճշմարտությունը և կամավոր ծառայությունը՝ այդ ճշմարտությունը իրականության վերածելու: Այս երկուքն են՝ միտք և կամք: Ստված ձեզ տվել է երկուքը և զանոնք գործածելու պարտականությունը: Շնորհավորում եմ ձեզ և մաղթում լավագույնը այս տարեշրջանին: